

Տնօրէն ժողովը երկար ժամանակ խորհրդակցութիւններ կատարելէ վերջ, յարմար գտաւ որ տեղեկագիրով մը առաջարկ տանի Միաբանական Ընդհ. ժողովին այս խնդրոյ մասին որոշում մը տալու համար: Միաբ. ժողովը 1929 Մարտ 26 ին գումարուեցաւ եւ տեսնելով Կիլիկիոյ կաթողիկոսութեան օգնելու պէտքը, միաձայնութեամբ որոշեց գոհացում տալ կթղ.ի առաջարկին և յետս կոչել Սիւրբիոյ իր տեսուչները՝ Ս. Աթոռ հրաւիրելով զանոնք. այս որոշման համաձայն Ս. Աթոռոյ պատկանող Սիւրբիոյ եկեղեցիները, դպրոցները ու վանատունները յանձնուեցան Կիլիկիոյ կաթողիկոսութեան, և միայն կալուածները ըստ առաջնոյն մնացին Ս. Աթոռին:

Սահակ կթղ. ունի երկասիրութիւններ որք են. Հախտոս աշխարհագրութիւն Բնական, Քաղաքակալ, Ուռուձնական ի Կ. Ս. Խ., (տպ. Երուսաղէմ, 1874). Նոր դասագիրք տեղեկագրութեան, (տպ. Երուսաղէմ, 1876). Բոյանդակութիւն սոցալիստականութեան, (տպ. Երուսաղէմ, 1880). Բնական պատմութիւն, (տպ. Երուսաղէմ, 1888). Պատմ. Հին Կաթողիկոսութիւն, (տպ. Երուսաղէմ, 1898): Պատրաստած է նաև Ս. Յակոբի Մատենադարանին ձեռագիրներու ընդարձակ չուցակագրութիւնը (կիսկատար եւ անտար) զոր նուիրած է Ս. Յակոբի վանքին:

ՍԱՀԱԿ ՊԵ. (1152—1180). Ս. Ներսէս Շնորհալի և Գրիգոր Տղայ կաթողիկոսներու հրաւերով, երկիրս գացած է Կիլիկիա և ներկայ եղած է Հոովմիկայի երկու ժողովներուն (1167 և 1179) որ գումարուած են Հայոց և Յունաց Միաբանութեան խնդիրին համար: Սահակ պարք. նոյն ժողովներու արձանագրութիւններու մէջ ստորագրած է հետեւեալ կերպով. Սահակ Արխեպ. աւստրաձակոյն քաղաքին Երուսաղէմի:

ՍԱՀԱԿ ՊԵ. ԵՒ ՊԿ. ԱՊՈՒԶԵՆՅԻ.— (1708—1714). Սահակ պարք. կը մնար Կ. Պոլիս, և իր կողմէն փոխանորդ մը կը վարէր Ս. Յակոբի վանքին գործերը: Կոլոտ իր տպագրած Վարդ Հարանցի յիշատակարանին մէջ հետեւեալ կերպով կը գնահատէ Ապուշեխցին. «... այլ արգ զՍահակ վանագարգ վարդապետն յիշեսցէ Տէր որ կարի սիրով ընկալաւ զմեզ ի գալն մեր յաս-